

կարգ ըլլայ բնիկ բառերուն, և չգործածուին բայց միայն երբ հարկաւոր պակաս մը կը լեցնեն: Ասիկայ զիջում մըն է որ կ'ըլլայ մեր լեզուին ընտելացած հին օտար բառերուն, ինչպէս պատերազմ, բարձման, եպիսկոպոս: Գալով նոր օտար բառերու, պէտք է անողոր խստութեամբ հետու պահել այնպիսիներն մեր լեզուէն, և միայն հայերէն նորակերտ համապատասխաններ գործածել անոնց տեղ: Մեր լեզուին մէջ տեղ չպիտի տանք քիտրկրացիս և պրոկրեսիսը և նման բառերու, վասն զի հարկ չկայ: Մեր լեզուն սքանչելի ընդունակութիւնն ունի նոր բառեր յերելու, և ուտի պէտք է յերիւրել յարմարն ու գեղեցիկը: Հայերէնին այս ընդունակութիւնը պարտաւորիչ կը դարձնէ մեզի համար այս լեզուական աշխարհավարտութիւնը որ գիտական է և ոչ լոկ զգացումական: Ո՛ր է լեզուի համար անկատարութիւն մըն է օտար բառեր գործածել, այսինքն այնպիսի բառեր որք կարկտաններ են լեզուին կցուած, և հասկըցուելու համար մասնաւոր տեղեկութիւն կը պահանջեն: Կատարեալ լեզուն ան է որուն բոլոր բառերը իրարու կապակցուած են ստուգաբանօրէն, և ամէն նոր բառ որ կը լսուի իրրեւ ազգակից մը և ընտանի մը կ'ողջունուի հասարակաց հասկացողութենէ: Այդ աստիճան կատարեալ լեզու մը չկայ. բայց հայերէնը կրնայ, հակառակ իր շատ մը օտարամուտ բառերուն, այդ իտէալին մօտենալ աւելի քան ուրիշ ո՛ր է լեզու: Հայերէնը ունի իր բնիկ տարրերու բաւական առատութիւն, որմէ կրնան դարձուիլ անթիւ նոր ու գեղեցիկ բառեր — անանկ բառեր որք հայ մտքին միշտ և ամեն դարու մէջ լուսաւոր երեւնան, իմաստի նշուով մը փայլին: Ի հարկէ, այս սկզբունքին զործաբարութիւնը մեծամեծ զգուշութիւններով ըլլալու է: Աններելի յանցանք է մեր գաւառաբարբառներուն մէջ պահպանուած ամինապատուական բնիկ բառերը անգիտանալով կամ անգիտելով ձեռնարկել նորեր դարբնելու: Նոյնպէս մեծ յանցանք է ո՛ր և է բառ

ստեղծել որ զուրկ ըլլայ յատկութենէ և գեղեցկութենէ. բայց աւելի մեծ յանցանք է օտար բառերը հայերէնի մէջ մտցնել, թեթեւօրէն վճռելով թէ չէ կարելի արժանաւոր հայերէն մը նորաշինել: Ո՛չ որ իրաւունք ունի վճռելու թէ հայերէն լեզուն մինչև այս ինչ կէտը կ'երթայ և ոչ աւելի հետուն, զի անոր ընդունակութեանց սահմաններն անծայրածիր են:

Գրեալ. Մ. Ս. ԳՈՐԴՈՒՆՅԱՆ



ՍԱԿԱՏ, ԿԱՄԻՆՐ, ՅՈՐԴՈՐԵՆԼ

Մեծարգոյ 3. Պոտուրեանիմ.

Երկ կարդացի Ձեր մի գեղեցիկ ուսումնասիրութիւնը Կրտս. Երզնկացու մասին. Բառարանի մէջ կային մի քանի բառեր, որոնք ըստ իս անճշտ էին բացատրուած. այդպիսիներն մէկն է 1. Ասկառ բառը: Այս բառը երբեմն կը գործածուէր Կարիշեւանի բարբառի մէջ Սախար հեշտմը և կը նշանակէր սառածանի (diaphragme). սովորութիւն էր չորցնել և ուսել, որ այժմ վերացած է: 2. Կամկար կը նշանակէ ոչ թէ կամակար, այլ քան դալ, ինչպէս որ մենք կ'սաննք՝ խմորը կամկար կեալ. կամկար քայլել: 3. Յորդորել բառը մեր լեզուի մէջ կը նշանակէ անել. այսպէս կ'սաննք՝ Լուրին պէս չորգորես: Յաջողութիւն ցանկանալով Ձեզ՝ մտած միշտ յարգաւորօց

Արքաւաճ Զամինեան

Ք Ո Ւ Թ Ե Ր Ի Կ Ը

Բուխերիկին բոցը կ'աչեմ ճարճատուն.  
Անով բերելըս երազկոտ կը վառին.  
Եւ կը դետեմ կայծին մոնեիլը Լուին՝  
Խաւարին մէջ՝ ուր միայն ինքն էր արթուն:

Ո՛րքան կարճ է անոր այդ կենացը Լոյսի.  
Մընուշգին հետ իր գերեզմանն ունի ան.  
Ինչու՞ լուին երկինք մ'ալ ինք՝ ուր շուտան  
Իր ճառանչներն՝ որոցք Լոյսն յար մեզ հոսի:

Ինչու՞ չըբնող իրերն այնքան շատ մոնին,  
Ինչու՞ կայծերն, երգերն, ու խունկ շուշանին՝  
Չունին իրենց անմահ եթերն ու զբրխալ,

Ո՛ր էն ինչոք սրբուկն իրենց վիշտ կամ սխտ.  
Ալ միշտ սպերն և թրթրուան սիրաւէտ.  
Ինչու՞ անոնց ալ լին սպերի տա յաւէտ...

Ահարոն